ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ //www.competition.am

«08» 02 2023թ.
No 001174

«ԵՐԵՎԱՆԻ «ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ»» ԲԱԺ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ ՖԻԱՄԵՏԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Թբիլիսյան խճ.20,
պատճենը՝ ք. Երևան, Հ.Հովհաննիսյան փ., տ. 19,
էլ.փոստի հասցե՝ armchampagne@rambler.ru)

Հարգելի՛ տիկին Հակոբյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի փետրվարի 7-ի «Թիվ ՀԳ-03551/22 վարույթը կասեցնելու վերաբերյալ «Ալկո Գարդեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջնորդությունը մերժելու մասին» թիվ 59-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «4» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Զարուհի Մելքումյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (240)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 21 մարտի 2023 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 փետրվարի 2023 թվականի թիվ 59-Ա

ԹԻՎ ՀԳ-03551/22 ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ԱԼԿՈ ԳԱՐԴԵՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2023 թվականի փետրվարի 7-ի նիստում, քննարկելով թիվ ՀԳ-03551/22 վարույթը կասեցնելու վերաբերյալ «Ալկո Գարդեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) միջնորդությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի, 2022 թվականի դեկտեմբերի 27-ի ««Ալկո Գարդեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Երևանի «Շամպայն Գինիների Գործարան»» բաց բաժնետիրական ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 475-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 475-Ա որոշում**) հարուցվել է վարույթ (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Վարույթը հարուցվել է «Ալկո Գարդեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Երևանի «Շամպայն Գինիների Գործարան»» բաց բաժնետիրական ընկերության կողմից «MERO'N» բառի և կաթիլի տեսքով պատկերի ներառմամբ ապրանքային նշանի, ինչպես նաև «LA'MERO'N»/«ԼԱ'ՄԵՌՈՆ» բառի և կաթիլի տեսքով պատկերի ներառմամբ ապրանքային նշանի օգտագործմամբ «Տերտերյանների Այգիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Տերտերյանների Այգիներ» ընկերություն**), նրա գործունեության և առաջարկած ապրանքների նկատմամբ շփոթության առաջացման դրսևորումներով անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Ընկերությունը 2023 թվականի հունվարի 30-ին միջնորդություն (այսուհետ նաև՝ **Միջնորդություն**) է ներկայացրել Հանձնաժողով՝ Վարույթը մինչև ԵԴ/55713/02/21 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը կասեցնելու վերաբերյալ:

Միջնորդությամբ, ի թիվս այլնի, Ընկերությունը նշել է, որ թիվ ԵԴ/55713/02/21 քաղաքացիական գործը գտնվում է դատաքննության փուլում և դեռևս չկա որևէ դատական ակտ, որը կհաստատի կամ կհերքի Ընկերության «LA' MERO'N»/«ԼԱ' ՄԵՌՈՆ» բառի և առանձին կաթիլի տեսքով ապրանքային նշանի և «Տերտերյանների Այգիներ» ընկերության ապրանքային նշանի շփոթության աստիճանի նմանության փաստը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 65-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթը կասեցվում է, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում որոշման ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործով կամ քրեական դատավարության կարգով քննվող վարույթով եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոնշյալ իրավանորմի ուսումնասիրությունից հետևում է, որ Հանձնաժողովը վարույթը կասեցում է երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. առկա է սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործ,
2. անհնարին է վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

Շարադրվածի լույսի ներքո՝ Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ երկրորդ պայմանի՝ վարույթի արդյունքում վարչական ակտի ընդունման «անհնարինության» վերլուծությանը:

Այս կապակցությամբ Հանձնաժողովը կարևորում է նույնաբովանդակ դրույթի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներով ձևավորված դիրքորոշման հիշատակումը: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/3478/02/20 քաղաքացիական գործով 2022 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ նշել է, որ դատարանի պարտականությունն է կասեցնել գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների: Ընդ որում, գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պարտավոր է նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը:

Շարադրվածին համահունչ՝ Հանձնաժողովը գտնում է, որ քննարկման առարկա իմաստով «անհնարինությունը» ենթադրում է երկու պայմանների միաժամանակյա առկայություն.

1. կապը վարույթի և սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև,

2. տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը վարչական վարույթի շրջանակներում հաստատելու հնարավորության բացակայություն:

Նման պայմաններում նախևառաջ հարկ է պարզել այն հանգամանքը, թե արդյոք գրանցված ապրանքային նշանին շփոթության աստիճանի նման չգրանցված ապրանքային նշանի օգտագործման արդյունքում շփոթության առաջացման փաստը չի կարող հաստատվել Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթի շրջանակում:

Այսպես, Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել շփոթություն այլ տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող կամ այլ կերպ շրջանառության մեջ դրված ապրանքների, դրանց փաթեթավորումների կամ պիտակների վրա կամ ապրանքին առնչվող այլ տեղեկատվության մեջ կամ ինտերնետային դոմենի անվանումներում կամ գովազդում այնպիսի անվանման, նշանի, նիշի, հնչյունի կամ բառի օգտագործումը, որը նույնական կամ շփոթելու աստիճանի նման է այլ տնտեսավարող սուբյեկտի՝ Հայաստանի Հանրապետությունում պահպանվող կամ նրա կողմից ավելի վաղ օգտագործվող կամ հանրահայտ ապրանքային կամ սպասարկման նշանին կամ ֆիրմային անվանմանը:

Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 16-24-րդ հոդվածներում նկարագրված իրավախախտումների հատկանիշների առկայության հարցը գնահատում է Հանձնաժողովը:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը սահմանում է Հանձնաժողովի կողմից հարուցված վարույթի շրջանակում ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների շփոթության աստիճանի նմանության որոշման կարգը:

Վերոնշյալից հետևում է, որ Հանձնաժողովն, ի թիվս այլնի, լիազորված է գնահատել ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների շփոթության աստիճան նմանության հարցը, որի մանրամասները սահմանված են Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից հարուցված վարույթի շրջանակում ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների շփոթության աստիճանի նմանության որոշման կարգը սահմանելու մասին» թիվ 379-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ թիվ ԵԴ/55713/02/21 քաղաքացիական գործի առկայությունը հիմք չէ Վարույթը կասեցնելու համար, որպիսի պայմաններում Միջնորդությունը ենթակա է մերժման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Տ

1. Թիվ ՀԳ-03551/22 վարույթը կասեցնելու վերաբերյալ «Ալկո Գարդեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջնորդությունը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2023 թ. փետրվարի 7

Երևան